

ՄԱՍԻՍ

Շ Ա Ր Ա Թ Ա Թ Ե Ր Թ


Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 20

17 ՄԱՅԻՍ 1903

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն



ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիւնն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դր. եւ զաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Թրանկ կամ 5 բուլլի: Թղթատարական ծախսը համագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առօրէ: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն համագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայմաններով:

Ձեռն-Բէ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در علیاده غلطاده (ماسيس) غزتي ادارى

Ի Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Մ Ա Ս Ի Ս Ի

Կ. Պոլիս, Դալաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

17 APRIL 1903

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

SCOTT'S EMULSION

The best of all
preparations of
cod-liver oil
is that which is
combined with
the most powerful
of all emulsifiers
the yolk of egg
which is the basis
of Scott's Emulsion
of Pure Cod-liver Oil.

SCOTT'S EMULSION

It is the most powerful
of all emulsifiers
the yolk of egg
which is the basis
of Scott's Emulsion
of Pure Cod-liver Oil.

It is the most powerful
of all emulsifiers
the yolk of egg
which is the basis
of Scott's Emulsion
of Pure Cod-liver Oil.

It is the most powerful
of all emulsifiers
the yolk of egg
which is the basis
of Scott's Emulsion
of Pure Cod-liver Oil.

It is the most powerful
of all emulsifiers
the yolk of egg
which is the basis
of Scott's Emulsion
of Pure Cod-liver Oil.

It is the most powerful
of all emulsifiers
the yolk of egg
which is the basis
of Scott's Emulsion
of Pure Cod-liver Oil.




SCOTT'S EMULSION

SCOTT'S EMULSION

SCOTT'S EMULSION

SCOTT'S EMULSION

SCOTT'S EMULSION
OF PURE COD-LIVER OIL
WITH HYPOPHOSPHITE
AND VITAMIN D
FOR THE TREATMENT OF
RICKETS, KIDNEY
DISEASE, AND ALL
DISEASES OF THE
BONES AND JOINTS
AND FOR THE
REPAIR OF THE
BLOOD AND
TISSUES OF THE
BODY.



SCOTT'S EMULSION

ՀԱՋԱՐԱՆՈՐ ՏԱՐԻՆԵՐ

Աս նոր գիւտի Օրուան հետ համեմատելով խիստ քիչ կարեւորութիւն մը ունին: Խոզատանձ (սըրաճո) և արեան տկարութիւն և միւս արեան քեշութեան հետեւանքները, որոնք մարմնոյ տկարութեան նշաններն են, այս պիտի աղետները դարմանող և բժշկող դեղ մը կրնայ միայն ամենակարեւոր և ամենաքանչելի բան մը համարուի: Ակաւսիկ հիմայ աշխարհիս մէջ կայ դեղ մը բոլոր այն տխուրութիւններէ մէջ:



SCOTT'S EMULSION

որ Առեգական միջնորդարի մէջ գտնուած փոշիները չորցնելուն պէս, նոյն հիւանդութիւնները կը բժշկէ:

ԸՍԳՕԹԻ ԻՆՎԵՐՈՒԹԻՈՒՆ

նաև մարդկային մարմինը շրջապատած բոլոր ախտերը հեռու կը վերնահանէ:

ԸՍԳՕԹԻ ԻՆՎԵՐՈՒԹԻՈՒՆ

Արեան տկարութիւնն ունցող տղոց կեանքը կը փրկէ:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւնն ընել պէտք է:

23

Բոլոր բեղաճարմանները և բեղաճարմանները իւր ծախսով:

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան և թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-իւրդոց թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով ետ կ'առնուին: Իսկ ապառիկ գնողներէն՝ 100ին 15 զեղչով:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻՒ

Կըսեն թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչը կը քրտնցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն, Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած քարմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք ամառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահէճ Գափու, Ճէյալ պէյ խան, թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



Կ. Պոլսոյ մէջ՝ Մասիսի հին թիւերէն դնելու պէտք ունեցողները կրնան դիմել Կամուրջին դուռը լրացրած անառ Միսաք աղային:

ՄԱՍԻՍ

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 20

17 ՄԱՅԻՍ 1903

ՈՏԱՆԱԻՈՐԻ ՄՐՑՈՒՄ

ՔՆՆԻԶՆԵՐՈՒՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

ԲԵՐԱ, 12 Մայիս 1903

Սիրելի խմբագրապետ «Մասիս»ի

Մասիսի բացած ոտանաւորի մրցումին քննիչներն ըլլալու պատուարեր պաշտօնն հաւթեամբ ընդունելով, հաւաքական նիստի մը մէջ կարդացինք Ձեր մեզի յանձնած 40 կտոր ոտանաւորները:

Առաջին ընթերցումով, անոնցմէ 25ը, իբր միջակ կամ շատ խակ գրուածքներ, մէկդի թողելէ ետքը, բաղդատական մասնաւոր քննութեան աւարկայ ըրինք 15 հատը, ստորագրուած հետեւեալ ծածկանուններով:

Հերիկ, Պանդուխտ, Շաքլթա, Աշուղ, Ծիածան, Երուանդ, Լեւակ, Ասդրա, Վիօլա տ'Ամօրէ, Մանուշակ, Ծիածան***, Արծիւ, Տիւֆրիս, Գլակ-Հինենց:

Երկրորդ ընթերցում մը անոնցմէ 10 հատին անբաւականութիւնն երեւան հանեց. և ուշադիր զննութիւնով մը տեսանք որ Առաջին Մրցանակի արժանի է «ԾԻԱԾԱՆ***» ստորագրուած «Բաժնուած սիրտեր» ոտանաւորը որ, թէպէտ բարձր ու շողողուն, անսողիւտ քերթուած մը չէ, սակայն յաջողակներուն մէջ գեղեցկագոյնն է. լեզուն մաքուր ու ներդաշնակ է, ոճը յստակ ու սահուն, բացատրութիւններն ալ զգայուն ու պատկերաւիյ են: Գաղափարներու պատշաճ դասաւորումն, և սիրուն ինքնեկ յանգերու շարքը ճաշակի և արուեստի ապացոյց են, և արժանիք մ'աւելի՜ հեղինակին համար:

Բ. Մրցանակը կը սահմանենք ԱՍԴՐԱՅԻՆ, որ, միակը 40 գրողներու մէջ, սիրային սովորական նիւթէն չեղելով, Երկնային սիրոյն անդրադարձած է, և մեղաւոր հոգիի մը, Աստուծոյ սիրտը վիրաւորած ու տառապող ամպարիչտ սրտի մը խորունկ զղջումին, մոլորեալ ոչխարի մը լալադին մայրնին աղերսարկու չեչոներն ունի իր գրուածքը, — լեզուն խնամեալ ու մաքուր, և արուեստն ալ բաւական յաջողակ է:

Գ. Մրցանակը կուտանք ԱՇՈՒԴԻՆ: Թէեւ ինքնատիպ գրող մէ գուրկ, հայկ. չափով իր նկարագրէր ոտանաւորը շատ բնական ու ներդաշնակ լեզուով մը գրուած է, հաճելի և զիւրաւան—միայն արուեստի մէկ քանի վտրք վրէպներով արատաւոր:

Կ'առաջարկենք որ այս երեքէն զատ քաջալերանքի համար յիշատակութիւն մը ընէք Վիօլա տ'Ամօրէի գրուածքին որ նորաբաբախ սրտի մը թրթռումները կը բացատրէ, միայն կրկնութիւններ և մէկ քանի թոյլ բացատրութիւններ ունի որոնք անոր արժէքը կը պակսեցունեն: Եոյնապէս յիշատակութիւն մըն ալ՝ Ծիածանին որ սեղմ տողերու մէջ հնչուն և սիրուն յանգերով արուեստի ճարտարութիւն մը կը յայտնէ, նոր գրողներու քիչ մը տարտամ ոճով և իմաստին անկատար պատկերացումով:

Կը յուսանք որ այս մրցումն իր օգուտը ունենայ Մասիսի երիտասարդ ընթերցողներէն անոնց համար, որոնք գրականութեան ճաշակն ունին, և միտքն ու սիրտը զուարթացնող զբօսանք մը ըրած են իրենց գրչի աշխատութիւնները:

Մաղթելով յաջողութիւն Ձեզ և Ձեր օգտակար Մասիսին, կը բարեւենք յարգանքով:
ԹՈՎՄԱՍ ԹԻՐՉԵԱՆ ՄԵՐՏԻՉ ԱՃԻՄԵԱՆ Ա.ՂԵԳՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր բացած Ոտանաւորի Մրցման արդիւնքը ծանուցանող այս Տեղեկագրին հրատարակութենէն անմիջապէս ետքը՝ աւագ պարտականութիւն կը համարինք հրապարակաւ շնորհակալութիւննիս յայտնել Մեծայարգ Բենիկներուն որոնք հաճեցան ընդունիլ Մասիսի խմբագրութեան հրաւերը, ասով նոր հաւաստիք մը տալով իրենց համակրանքին՝ այս Գրական Շաբաթաթերթին նկատմամբ և միանգամայն իրենց պատուաբեր աջակցութիւնը նուիրելով բանաստեղծական ճիւղը մշակել փափագող նոր գրիչները քաջալերելու ձգտող համեստ ձեռնարկի մը:

Տեսրք Աճէմեան, Թէրզեան և Փանոսեան՝ իրենց այս գործն հետ մէկտեղ խմբագրութեանս յանձնեցին, Մրցանակի և Գնահատական Յիշատակութեան արժանի դատուած հինգ ոտանաւորները և անոնց հեղինակներուն իսկական ստորագրութիւնը պարտականող գոց պահաւանները զորս բանալով տեսանք որ, քառսուն մրցակիցներու մէջէն առաջին հանդիսացող և Ծիածան*** ծածկանունը կրող բանաստեղծութեան հեղինակն է ԳԱՅՐԻԷԼ ԽԱՆՃԵԱՆ (Ուրֆա)

Երկրորդը՝ որ կը համապատասխանէ Ասորա ծածկանունին, ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌԻՔ (Կ. Պոլիս):

Երրորդը՝ որ կը կրէ Աշուղ ծածկանունը, ԱՐՄԷՆ ՉՐԱԲԵԱՆ (Գոնեա):

Չորրորդը՝ Վիօլա s'ամուհ՝ Մ. Կ. ՊԱՐԱՄԵԱՆ (Կ. Պոլիս):

Հինգերորդը՝ Ծիածան՝ (առանց երեք նիշերու) ՄԻՍԱԲ Կ. ՄԵՇԱՏՈՒՐԵԱՆ (Կ. Պոլիս, ուսանող Կեդր. Վարժարանի):

Առաջին «սրակաւոր»ը ծանօթացնելու համար մեր ընթերցողներուն, կը բաւէ որ ըսենք թէ Գ. Խանճեան նոյն ինքն «Վարդգէս»ն է որուն գողարիկ բանաստեղծութիւն-

ները այնքան դնահատուած են մեր պարբերականներուն մէջ: Կը շնորհաւորենք զինքը իր այս գրական յաջողութեանը համար և կը հրաւիրենք զինքը որ հաճի խմբագրութեանս ուղղուած նամակով մը ցոյց տալ հոս մէկը որուն յանձնեց իրեն յատկացուած մրցանակը՝ ՈՍԿԻ ԳՐԻՉ ՄԼ:

Գ. Խանճեան դաւառացի երիտասարդ մըն է, նախկին սան Ս. Փրկչի Հիւանդանոցի Որբանոցին, որ Կայս. Բժշկական Վարժարանի դեղագործական ճիւղի դասընթացքին հետեւելով, անցեալ տարի ստացաւ վկայականը և Ուրֆա դնաց հաստատուեցաւ իր արհեստն ի գործ դնելու:

Մասիսի յաջորդ թիւերով հետզհետէ պիտի հրատարակենք Հայկանոյ Մառքի, Արմէն Չրաքեանի, Մ. Կ. Պարամեանի և Միսաք Կ. Մեծատուրեանի ոտանաւորները, իւրաքանչիւրին վրայ հակիրճ ծանօթութեամբ մը և ծանուցանելով միանգամայն անոնց նուիրուելիք մրցանակները:

Կը փութանք այժմէն ըսել, թէ ճարտարապետ Լեւոն էֆ. Կիւրեղեան, որուն գեղարուեստական գեղեցիկ մէկ յօդուածը հրատարակած ենք Մասիսի ներկայ թիւով, ինքնաբերաբար յանձն առած է ինք նուիրել առաջին մրցանակի յատուկ ոսկի գրիչը, իբրեւ գնահատման ու համակրանքի արտայայտութիւն մը՝ այս գրական մրցումին նկատմամբ, յօժարամտութիւն յայտնելով միանգամայն՝ դեղարուեստական կամ արուեստագիտական նիւթի մը վերաբերեալ յօդուածներու մրցում մը առաջարկել տալ յառաջիկային Մասիսի միջոցաւ, դրաման պարգեւով մը:

Նոյնպէս, Աղեքսանդր էֆ. Փանոսեան, իբրեւ մասնաւոր գնահատման նշան մը իր կողմէ, բանաստեղծութեանց ալլոմ մը կը նուիրէ Արմէն Չրաքեանի:

ՔԱՅՆՈՒԱԾ ՍԽՐՏԵՐ

Փրփրակոհակ ու ամենի ծովերեն
Անցայ, անծայր ու ամրի ջուրերու
Անհունութիւն մ'եթիս քողով . միշտ հեռու
Երբայ քեզմէ՝ չէր բաղդիս խաղն անօրէն :

Անցայ կոյսերն ամպածքաւ լեռներուն,
Ուռնէ մաշուաւ հոգիիս մէջ երազկոս,
Խորհողաւոր այլուի մը անծանօթ
Հըմայքն էի՛ն ներարկած խոր : Ու հեռուն,

Անհունածիր դաշտերու գոգն, ահաւոր
Մեհուքեանց մէջ տարի քայլերս անվասան .
Ու բիւր խութեր, երկարածիգ նամբուս վրայ,
Մեղկ աւ խանջած մարմինս քրին վիրաւոր :

Ու խոնջեմքիս չի գրտայ վայր մը խաղաղ . . .
Զոր փնտռեցի հանգրւան մը լուսաւոյ,
Դաշտերուն մէջ քողի ծանձրոյթս մաշող .
Այլ ուղիներն ինձ դարձուցին զայն, աւաղ :

* *

Մղոններով հիմայ հեռու, այլ նորէն
Միշտ նոյն բոցն է որ կը վառի ներսիդիս,
Նայուածքիդ լոկ յիշատակովն ալ՝ հոգիս
Հին յոգերու կը զգայ սարսուռն ու ժգնօրէն :

Թախծ՝ մ'անհուն, ամպ իսրայուս ու մրթին,
Կը ծանրանայ կեանքիս վրայ առ յաւէս,
Ու դալկահար օրօններէս ալ անհետ,
Կը խուսի հուսկ ծիծաղի մը ծալքն յետին :

Ու կը քաղուիմ անըջանքի մէջ . . . Յանկարծ,
Զքնաղ պատկերդ աչքերուս դէմ կը ցցուի,
Ու հեշտանով մարմինս ամբողջ կը ցնցուի,
Այդ պատշելի լոյս տեսիլքէն սիրարժարծ :

Վերացումի այդ վայրկենին. վարդ դեմքեդ,
Սեր-նանանչ մը մինչեւ ինձի կ'երկարի,
Կեանքոս հուր մը տալու հոգւոյս անարի,
Յոյսի շող մը, երջանկութեան ցոյլ մը գէթ :


Դեմքդ հեռուէն ինձ ի՛նչ աղուոր կը քրլի,
— Համակ պատշուժ, համակ սէր, խանդ ու գորով—
Զոր կը դիտեմ հոգւոյս նրաղ աչքերով :
Ու կ'ուռի սիրս ալ կարօտով ծափալի . . .

Ու կը մոռնամ ինչ որ ինձի տրիւր վիշտ,
Ի՛նչ կսկիծներ, ի՛նչ սուր խոցեր հերիւնի,
Ի՛նչ հե՛ք արթիւ՝ որ տակաւին կ'արիւնի,
Ահ, յիշելու համար արդեօք քեզ ընդմիշտ . . .

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱԶԽԱՐՅԷՆ

Ս. ՄԱՐԿՈՍԻ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Ի ՎԵՆԵՏԻԿ



Աղբիականի չքնադեղ խորչին խորը, ճրդ անգամ ըլլալով Վենետիկ քաղաքը իր նկարչական միջազգային Յուդայաւանը ի հանդէս կը դնէ ընտիր և դարգացած հասարակութեան մը անկողնակալ դատողութեան և գնահատութեան:

Եւ այս՝ Ս. Մարկոսի զանգակատան վերաշինութեան հիմնադրութեան ճիշդ օրը: Զուգադիպումը նշանաւոր է և նշանակելի, ուր՝ կը նշմարենք տոժերու մեծահամբաւ քաղաքին մշտավառ մնացած այն հին զգացումը, սերած իրենց՝ նախահայրներէն. այն սէրը գեղեցկին ներդաշնակութեան և շքեղութեան, որոնք այնքան անուանի ըրած և հռչակած են դայն Աղբիական թաղուհին: Յանցանք մըն է օտարականին՝ եթէ չէ արծաւ նազրած իր ճանապարհութեան ծրագրին. մէջ տոժերուն քաղաքը, ուր խումբ խումբ՝ գօտաք մը ուսէն կախ, միւս ձեռքը Պեթկեռը կը շրջին և կամ ընկողմնած հեղասան կոնտոլաներուն խորը, որ ծփալով ծփծփալով, երկաթապատ գլուխը տարուբեր, նազելի շարժումներով, կարծէք Լակունային ջուրերուն համբուրիկներ բաշխելով, կուգան կ'անցնին կը հեռանան ձերմակ փրփուրի վազանցիկ հետք մը թողնելով...: Հեռուն ձայն մըն է որ կը դուռայ. aprimi! Կոնտոլաւորներն են որ իրարու լուր կուտան. ջուրը կը պատռի թիւրուն զօրաւոր ճողփիւնէն, պլտուտակաւոր ալիքներու ընդհարում մը Լակունային միօրինակութիւնը կը խանդարէ և կոնտոլան canaletto մը դառնալով աներեւոյթ կ'ըլլայ:

Տեսիլք, երազ մը կախարդիչ:

Խորհրդաւոր և անմահ ևս՝ իրաւի, ո՛վ Վենետիկ, ուր ամէն բան ջուրին նման լուի կու գայ, կ'ապրի և կ'անցնի, — տարբերութեամբ որ իր անցքին նշանակը թողնելով:

Ձի կայ կարծեմ վայր մը, ուր մարդու հոգւոյն մէջ յուզմունքներ այսքան խուռն վխտան, ուր այսքան ուժգին նկարչական վառ սպաւորութիւններ տոգորուին:

Մեծափարթամ ապարանքի մը դահլիճին մէջ դտնուելոյ նման, օտարականը՝ պահ մը աջ և պահ մը ձախ, ոսկի, դեղին, կապոյտ և մարմարեայ դոյներու հաճելի խառնուրդին վրայ իր շփոթած նայուածքը կը շրջէ. ինքն ալ շփոթած՝ որո՞ւ վրայ կանգ առնել, ո՞րը նախապատիւ դասել:

Այս եւ ասոր նման հմայքներն են որ Վենետիկը երազել կուտան արուեստասէրին, երթալ տեսնալ, դոնէ անգամ մը, այդ ծովակառոյց քաղաքը, որ դարերէ ի վեր Աղբիականի փորձոստալայ ալեաց լրթագոյն յատակին վրայ խարխալ նետած, հրաշագեղ յուշկապարիկի նաղանքներով, մակընթացութեան հոսանքին մէջ կը ծփծփայ, անվերջ տատանումներով:

Վենետիկ իր ամբողջութեամբը մշտաբայ թանգարան մըն է. քննող աչքը շարունակ կը նշմարէ գեղարուեստական կամ պատմական հետքեր, նշանաւոր ինքնին, եւ կամ վկայ անցեալի փառքին:

Կա՛մ գեղարուեստ և կա՛մ ընական գեղեցկութիւն:

Այս երկու վարպետները, Աղբիականի ծանծաղուտ ափերուն վրայ կարծէք եկած ձեռք ձեռքի տուած են կաղմեւու և կերտելու այդ ճախճախտալին վրայ 72 կղզիներէ բաղադրեալ քաղաք մը, որու ոտքերը յաւիտենական մամուռը շարունակ պատած է կանաչ: Եւ այս գեղարուեստի ու գեղեցկին համախորժութիւն վրայ կանգուն, տիրող և մեծաշուք Ս. Մարկոսի աշտարակը կը սաւառնէր, աւաղ, ատենօք, իր խրոխտ գլուխը արեւուն ճառագայթներէ:

գայթերէն լուսաւորուած, և դադարեալ-
ծայրը թառած կը հանգչէր հրեշտակ մը հո-
լաթեւ, ոսկեղէն փայլով շողշողուն:

Բարելոնի աշտարակէն յետոյ է'ն նշանա-
ւոր աշտարակն էր այս, որ անցեալին մէջ
ամբողջ ժողովուրդի մը կեանքը ու կենցաղը
անթել լարերով իրեն կապած, կը շարժէր,
կ'ապրեցնէր: Կանգուն իր 9/4 մեթր բարձ-
րութեամբ՝ հանդոյն Խորայեղալոց հրեղէն սիւ-
նին՝ իր հսկայակերտ զանդուածին շուքին
ներքեւ ամփոփած խաղաղիկ Վենետիկցին, որ
յորդեռանդն պաշտոնավոր և կաթողին սիրով
յարած իր գամբանօցին, զինքն ուղղեցոյց
առած էր իր փառքի և ճակատագրի ճամ-
բուն մէջ:

Արդէն, ամէն ժամանակ, ժողովուրդը իր
յատուկ՝ սեփական պաշտած կուռքը ունեցած
է գեղարուեստի մէջ. Բարիզցին՝ իր Նօթր
Տամը, Հոռո՝ իր Գուրդոնէն և Վենետիկ
ալ իր Գամբանոնէն:

Իններորդ և տասներորդ դարերուն չըր-
ջանին մէջ, միջինդարեան Վենետիկը, շար-
ժուն կամուրջներով միացած ցամաքամասերէ
կազմուած էր, որոնց շուրջը սղմուտ փոսե-
րով բնական կերպով ամրացած, արդի բնակ-
չաց նախահայրերը կը բարդաւածէին արեւ-
ելքի հետ վաճառականութեամբ զբաղելով:
Այս թուականներուն է որ Ս. Մարկոսի հրա-
պարակին տեղը աշտարակին առաջին հիմնար-
կութիւնները եղած են:

— Բեռօլսօ պատմագիրը կը պատմէ թէ
«911 թուականին երբ Վենետիկ ուժը ու կա-
րողութիւնը աճելու վրայ էր, սկսաւ արծաթ
դրամ կտրել և որոշեց Ս. Մարկոսի զանգա-
կատան հիմնադրութիւնը»:

— Ճիովաննի Յուլեանի որ մինչեւ 1516
թուականը Վենետիկ պատմութիւնը գրած է,
յստակ կերպով կարձանագրէ թէ «Յամին 911
թուականին, Ս. Մարկոսի աշտարակին հիմ-
նարկութիւնը եղաւ, եօթանիւն յատակագծի
վրայ, որպէս զի իւրաքանչիւր ծայր ընդգի-
մանայ և կարող ըլլայ սողալու վիթխարի
զանգուածին ծանրաբեռնութեան»:

— Իսկ նշանաւոր Սանտովինօ ճարտարա-
պետը, այս հիմնարկութեան թուականը կը
վերագրէ Բիէթոօ Թախլունոյ սոփութեան

ժամանակին, որ է ըսել 888ին: Պատմաբան-
ներու ընդհանրութիւնը այս թուականին ա-
ւելի կարեւորութիւն կուտայ. և որքան ալ
որ ստոյգ չեն կրցած հիմնարկութեան տարին
որոշել, այսուհանդերձ վերջէն կատարուած
վերաշինութիւնները եւ նորոգութիւնները
լաւ ճշգրտած են:

Այսպէս Յուլեանի կը պատմէ թէ 1148ին,
Տոմինիկօ Մոռողինի սոփութեան օրով սկսաւ
աշտարակը բարձրանալ և նոյն իսկ բանոր-
ներէն մէկուն գլուխը դառնալով օդին պա-
րագութեան մէջ գահաւիժած աստիճան Ս.
Մարկոսը օդնութեան կանչելով ազատած է
լաստակաղիրքներուն ցիցէն կախուելով:
Այսպէս 1170ին Վիթալէ Միքայէլ Բ. սոփը
աշտարակը ինչուան զանգակներու խուցը
բարձրացուցեր է:

Մօնթանեսա ճարտարապետը 1329ին աշ-
տարակը նորոգեր է, անկման սպառնալից վը-
տանգին առաջքը առնելով:

1379 թուականին ձեռնովացիներու յարձա-
կումին դէմ դնելու նպատակով 4 թնդանօթ
աշտարակին ծայրը դետեղեր են. և ո՛վ պիտի
ըսէր որ 5 դար յետոյ 2 քիլոմէթր արամագը-
ծի մէջ թնդանօթ արձակելու իսկ թոյլտու-
ութիւն չի կար Վենետիկի մէջ, որպէս զի
օդային ցնցումներու տեղի չի տրուի:

Նոյն տարին հրեհն մը փայտաշէն վերջա-
ծայրը ջնջեր է, զոր նորէն աւերելով աւելի
բարձր մը շիներ են:

Այսպէս կարգ մը շանթերու և հրեհնե-
րու աւերիչ հարուածներուն դէմ դնելէն յե-
տոյ, 1512ին երկրաշարժը զինքը զգալի կեր-
պով խախտեց իր հաստատութեանը մէջ:

Յաջորդ տարին անուանի Մասթոօ Պաու-
թօլօմէօ Պուճոյին յանձնուեցաւ, որ մեր
մասքօնիներուն չէր նմաներ, և նա վերանո-
րութիւնը կատարեց եւ լրացուց մարմար-
ներով և զարդերով պաճուճելով այդ մեծա-
մարմին կոթողը և տալով անոր իր վերջնա-
կան ձեւը զոր ինչուան անկումէն առաջ ան-
փոփոխ պահած էր:

Այս հիմնական նորոգութիւնէն յետոյ նո-
րէն շանթերու զոհ եղած, վերստին շինուած,
վերջապէս շանթարգելքի գիւտը եկաւ զինքը
ազատեց դարերու կործանիչ սրամտութիւնէն:

Այս բարձունքին վրայ, հաստակառոյց փայտակերտ շինուածքէ մը կախուած կային 5 զանգակները, արդէն նշանաւոր և իւրաքանչիւրը իրեն յատուկ անուններով յորջորջուած:

Էն մեծին անունն էր Մառանկոնա, որ այգուն ոսկեղէն դռներուն բանալը կ'աւետէր լուսութեան և խոնաւ վերմակի մը ներքեւ քնացող քաղաքին: Այս զօղանջէն կ'արթննային մառանկոնի(*) արհեստաւորները, որոնք բաղմամբիւ էին այն ատենները. քանզի շինութիւնները մեծաւ մասամբ փայտաշէն էին:

Ռիցկիեռա, աւելի փոքր, այս կերպ անուանուած էր՝ քանզի կը հրաւիրէր ազնուականները դալ և հրապարակօրէն ճառախօսելով, բարոյականի դասեր տալ ժողովրդեան, ինչպէս սովորութիւն էր հին հելլէններուն ժամանակ. aringare ըսել է՝ ճառել ժողովրդեան: Այս զանգակը երբեմն քոռքքեռա ալ կ'ըսուէր trotolare—ընթանալ բառէն սեւրած, քանզի ասոր ձայնին՝ ջորիներու վրած հեծած ազնուականք դէպ ի տոժերուն ապարանքը կ'ընթանային:

Երրորդին անունը Մեծծաքեցա, որուն ձայնէն վիհնակոյ հռչակաւոր նաւարանին աշխատաւորները կը փութային օրականներնին զանձեւու, մինչդեռ կղերականները իրենց սուրբ պաշտամունքները կը սկսէին կատարել: Մէկ ժամ վերջը կը հնչէր Թեոցան, որ դատաւորները դատարանի կը նստեցնէր:

Հինգերորդը Բոնկիեռա, որ աղօթք կը նշանակէ, և կամ գամբանա սեյ մայեֆիչիօ որ դիտատմանց առթիւ իր տխուր և մահասարսուռ զօղանջը կը հնչեցնէր, Լակունայի ջուրերուն վրայ ցուրտ սառսուռ մը քստմնեցնելով:

Եւ այսպէս, ժողովուրդին հոգեւոր և քաղաքային հանգէսներու դէպքերու առթիւ դործածութեան համեմատ՝ այլ ևս այլ անուններով կոչուած էին այս 5 հաս պղնձեայ զանգակները, որոնց սիրելի ձայնը ժողովուրդը գիտէր զանազանի, որ իրեն մտերիմ, անով կ'արթննար կը փութար աշխատութեան և կեանքի պայքարին, կը մտնէր խրախճանքի

և ուրախութեան: Ազնուականք անոր ձայնէն կը ներշնչուէին վեհ և ազնիւ զգացումներով, քարոզելու կրթելու ազնուացնելու ժողովուրդին սիրան ու հոգին:

* *

Երբոր իր փուղումին փոթալից լուրը տարածուեցաւ, խոցեցան ամէն սիրտերը: Վիհնակի շուարած՝ չէր կարող համոզուիլ, իր անդառնալի կորուստէն յուսակտուր: Չի կար այլ եւս գամբանոնէն, իր այսքան տարուան պաշտելին: Հեռուն՝ նավաւարը չի պիտի տեսնար անոր սուր սլաքը: Մայրեր չպիտի ցոյց տային ամպերուն մէջ սաւառնած ոսկեփայլ հրեշտակը: Չպիտի լսուէր ուրեմն իր զանգակներուն թաւ զօղանջը որ քաղաքին էն հեռաւոր անկիւնները կ'երթար արձագանգներ արթնցնելու:

Աւագ, չէր նա այլ ևս:

Եւ լրագիրները, սգաւոր, անվերջ գրեցին, թախիծը գրչերնէն կը կաթէր տխուր էջերու սխնակներուն մէջ:

Գեղարուեստական մարմինները, ափ ի բերան, չուղեցին հաւատալ այսքան կարեւոր կորուստին: Ինչպէ՞ս կարելի է որ տապալուէր այդքան հոյակապ կոթող մը, այն ծերունի պահապանը, որ դարերու ընթացքին դէմ արիւաբար կուրծք դրած, առած բերած էր իր հակայ ուսին վրայ փառաւոր անցեալի մը անդուլթեանց ծրարը:

Եւ նա կարծէք ամենափափուկ զգուշութեամբ պահ մը իր ալեւոր դուլիւր ետ չընելով, տխուր նայուածքով իր սիրելի վիհնակի կրկար մնաս բարով մը ուղղեց եւ Ս. Մարկոսի օգաթուղիի գմբէթներուն և ոսկեղերուադ մոզայիզներուն, տոժերուն ապարանքին բեռան և դարերու ներքեւ ճնշուած կամարներուն հուսկ բարեւ մը տալով, և վերջապէս Սանտովինեան Լոճճիթթայէն և վեքքիա Պիպլիոթեքայէն ներողութիւն հայցելով որ չի պիտի յաջողեր իր անկման ժամանակ անվնաս ըլլալ, վերջին հրաժեշտի նայուածք մը նետեց ծովալիճին կապուտին որ նախազգացումէն քարացած իր շարունակ չըջանին մէջ կանգ առաւ, մինչ հակայ զանգակատունը տակաւ գլուխը կը հակէր, զգուշութեամբ փրկելով, ամպի փոշի մը յա-

(*) Մառանկոյ

բուցանելով, հազիւ Պիպլիթէքային երեք կամարները քերելով, ինքն իր իշխատակին վրայ դիպեցնելով, ճնշեց վիշեց և կիրի աղիւսի կոյտ մը դարձած տապալեցաւ յաղթանդամ և անկենդան: Լացին ամէն բուխսիրտեր, լացին ծաւի աչքեր Վենետիկուհին:

Հնախօսք մտախորհ, տխուր հետեւանքներ գուժեցին Վենետիկի համար:

Տարբեր գաղափարներ ընդհարեցան.

Վերստին չինել թէ զանց ընել:

Խնդիրը միջազգային եղաւ: Միւս կողմէ Վենետիկոյ քաղաքապետութիւնը աշխարհի չորս ծայրերէն ցաւակցութիւն և դրամական նուէրներ կ'ընդունէր, նորէն կանգնելու, չի զրկելու չքնաղ Վենետիկը իր աշտարակէն:

Ու վերաշինութեան կուսակցութիւնը յաղթանակեց վերջապէս:

Եւ այսպէս «Վիթթուօ Էմմանուելէ Բ.ի թագաւորութեան ժամանակ յամին 1903 ապրիլ 26, Գոնթէ տի Թուրնօյի, Իտալիոյ և Գաղղիոյ կրթական նախարարաց ներկայութեամբ, վերստին հիմնադրութիւնը եղաւ Ս. Մարկոսի Չանդակատան» որու առթիւ երկու նախարարները պատեհաւոր ծառեր խօսեցան նշանակելով և դուրելով Վենետիկոյ քաղաքին և ժողովուրդին ճիգերը որ կրցաւ այնքան խոջընդոտներու յաղթել ճիշդ 1000 տարի վերջը մեծ աշտարակին երկրորդ հիմնարկութիւնը ընելով, որ թէպէտ իր նախորդին ձեւն ու մեծութիւնը պիտի ունենայ, առանց անոր աշխարհնչակ համբաւը վայելու, ինչուան որ ինքն ալ ժամանակին ժանգէն սեւցած, իր դարգերը և դրուագները հովին հպումէն մաշած, դարբնու չրջաններ կատարէ և նշանաւոր դէպքեր գան իր գլուխը սրահել և հաւասարեցնել իր նախորդին, որուն լոկ առ այժմ յիշատակը այցելուին հոգւոյն մէջ պիտի արթնցնէ իւր հսկայ զանգուածով: Օտարականը, չորեքնաւին մօտենալուն, պիտի տեսնայ նորէն Ս. Մարկոսի հրեշտակը, որ իրեն բարի դալուստ կ'ողջունէ. և այսպէս երբ թողու հեռանայ Լակունայի ջուրերը, դէպի երկինք պիտի ուղղէ իր հրաժեշտի ողջոյնները, քանզի նա է որ կը ներկայացնէ քաղաքն ու քաղաքացին:

Ուստի, Վենետիկցին և ուղեւորները նո-

րէն պիտի վայելեն օգապարիկի ձեւով Ս. Մարկոսի եկեղեցւոյն գմբեթներուն եւ տոփի ապարանքին կամարիկներուն և Բալացցօ Ռէալէի պարտէզին կանանչութեան ետին կանդուն, վիթխարի հսկայածեւ աշտարակը իր երկայն կիսասիւններով և նեղ լուսամուտներով որոնց վրայ պիտի բազմի հողաթեւ՝ առաւօտեան մշուշին գունաւոր խոնաւութեան վրայ սաւառնած Վենետիկոյ հրեշտակը, որուն ոսկեփայլ թեւերուն վրայ կը շողան առաւօտեան վարդակարմիր արեւածայրք:

ԼՍՌԱՆ ԿՈՒՐՅՈՂՆԱՆ

ԵՐԱՁՈՒԱԾ ՍԷՐ

(ՆՈՐԱՎԷՊ)

«... Կըզգամ որ ա'լ անտանելի կը դառնամ կոր: Կ'ուզեմ փախչիլ, կ'ուզեմ խոյս տալ այն երեւակայական աշխարհէն, ուր կը բնակիմ քանի մը ամիսներէ ի վեր: Սիրտս ա'լ առջի պէս չի բաբախեր, միտքս չի' կրնար ալ առջի պէս աշխատիլ: Ձեմ' կրնար կոր կարգալ: Ձեմ' կրնար գրել, չեմ' կրնար քալել, պտըտիլ. բան մը եղած եմ: Եւ մարդիկ կան որոնք երեսս կը նային միա՝ մտաբար, ու փոփոխութիւններուս, արտմութիւններուս պատճառը ամենապզտիկ բան մը կը նկատեն: Ապուշները: Ձեն գիտեր որ բոլոր հրայրքներս գրգռուել են, չեն գիտեր որ բոլոր անուրջներս իրենց յանկուցիչ, տիեզերական դաշնութիւնները կը համերգեն, բոլոր գաղափարներս կը պոռան, կը գոռան իրենց մետաքսաւէտ խանձարուբներուն մէջէն:

«Ըղձանքներուն երաժշտութիւնը կը շընչեմ. ըղձանքներուն թուլցնող ու խեղայեղիչ երաժշտութիւնը:

«Տղայ էի առաջ, ո'չ մէկ բան կը ճանչնայի, հաճոյքներս տղու աննպատակ հաճոյքներ էին, ու երազներս՝ տղու տափակ ու պայմանադրական երազներ:

«Սէրը այն ատեն պուպրիկ մըն էր, որուն հետ, ես ալ պուպրիկ, կը խաղայի. կը խաղայի, առանց ճանճրոյթի:

«Յոյսը իրիկունն էր. խոստումներու և ընծաներու իրիկունը :

«Հիմա տարբեր են անոնք. սէրը սա երաժշտութիւնն է որ երեւակայութեանս մէկ մութ անկիւնէն կը դուստայ, կը փոթորկէ ներսիդիս. յոյսը այն անհալելի ու ոսկեաւոր երազն է, որ հեռուէն կը քալէ միշտ, որ հեռուէն կը նայի ինծի :

«Ու ասիկա որքան հեռանայ ինէ, միւսը՝ ըզճանքներուն թուլցնող երաժշտութիւնը, աւելի՛ կը մօտենայ, աւելի գինովցնող կը դառնայ :

«Եւ սոսկումով, դառնութեամբ կը զգամ որ այդ հրայրքոտ, յայրստ երաժշտութիւնը ընողները ջիւղերս են, սիրայոյզ ջիւղերս, որոնք անծանօթ, մաքուր տարիմանքի մը գեղօնները կ'երգեն անդու, առտուընէ մինչև իրիկուն... :

«Կ'ըսեն որ ապագայ ունիմ. ապագայն, ինչ ընեմ ես այդ պատրոզ, դնու վհուկը, որ իր տափակ, միօրինակ յանկերդներով բաղդս դուշակել կը յաւակնի : Փնտռածս ո'չ ոք կը դուշակէ, ո'չ ոք կրնայ դուշակել : Փնտռածս ե'ս կրնամ գիտնալ, որովհետեւ ես եմ դայն յղացողը, տարտամ բա՛յց հզօր երազանքներուս միջոցաւ :

«Փնտռածս չէք կրնար գիտնալ. տենչանքներուս բոլոր թափովը կը դաւարուիմ կոր, դայն չկրնալ գտնելուս համար. ո՛ւր է արդեօք, այդ երազուած, անուրջին ծաղիկներս րովը բուրումնաւէտ այդ սիրունին :

«Պիտի չկրնամ գտնել դայն : Բնութեան ամենէն մաքուր զգացումներովը, բաւերուս ամենէն նուրբովը, ամենէն աննիւթականովը անոր դէմքը պիտի տարփողեմ, հոգ չէ թէ անիկա անգայտ, ճերմակ չղարչէ բեհեզներու սակ քօղածածկուած պաշտելին մնայ միշտ :

«Զիս սիրելու համար պիտի ծնի, գաղափարներուս, զգայութիւններուս, տպաւորութիւններուս մտերմութիւն պիտի ըլլայ ան, համբուրելի էակը, զոր կը սիրեմ երեւակայական, երազուած սիրոյ մը ամբո՛ղջ տարփանքովը :

«Ինձմով պիտի շրջալի միշտ, զգացումնե՛րս պիտի նօթագրէ, զիս պիտի հասկնայ լերջապէս, ինչպէս որ ես դայն պիտի հաս-

կընամ : Պիտի ըսէ ինծի, ինչ որ ուրիշներ չեն կրնար ըսել, քոյրս պիտի ըլլայ ան, սիրոյ քոյր՝ մաքուր, եթերային, կապոյտներով էակ մը, որ իր զգլխիչ հրապոյրներուն ու մոգական շնորհներուն մէջ իմ երազող, գիւրազգայ ազու բաղճանքներս պիտի իրագործէ :

«Օր մը այդ հուրին գտայ իրաւցնէ, ինծի դադափարակից, համամիտ մէկու մը հանդիպելով : Գաղափարակցութիւն մը որ երբեք կաշմուած չէր իրարու հաճելի ըլլալու, սիրելու, սիրուելու փոխադարձ յաւակնութեան գիտակցութեանէն : Մեր նկարագիրին առաջին գիծը հետաքրքրութիւնն էր, բան մը զոր բնաւ չէինք ծածկեր ուրիշներէ, և շատ անգամ կը խոստովանէինք նոյն իսկ, այդ բնաւորութեան հիւանդութիւն մը ըլլալը յայտարարելով : Երկուքս ալ երազող հոգիներ, իրարմէ ո'չ նուազ անկեղծ, բանաստեղծի անհանգիստ ու տառապող հոգիներով, ընդ-վզող, չարածճի նկարագրի մը բովանդակ անուշութիւններուն միացած :

«Իրար կը լրացնէինք : Իրարու համար կ'աւարէինք աւելի, քան թէ մեր անձին համար : Սիրելու պէտքէն զրգուած՝ կը պաշտէինք զիրար : Թէեւ տղայ, բայց մեծի պէս էինք գրեթէ, գգուանքներնուս ու պաշտումներնուս մէջ : Եթէ կար բան մը սակայն, զոր կ'ատէինք երկուքս ալ, զոր կը վախաքէինք չունեցած ըլլալ, այն զգայնութիւնն էր, որ ամէն բանի մէջ կը յայտնուէր, պզտիկ, չընչին խօսքերէ առնուելու, ամենատչինչ դժուարութիւններու բաղխած, զրած ատեննիս նոյն իսկ : Երբեմն այդ զգայնութիւնը անանկ սուր հանգամանք մը կը ստանար որ, հոգի-նուս խորէն, մեր ամբողջ մարմնով, մահուան սարսուռներով կը դողդղայինք, կեանքը խնդի և զուարճութիւններու հովիտ մը երեւակայող ու խարուող, հէքեաթին հովիւն նման :

«Ծի՛շտ միտաւածս էր :

«Հիմալի մարմին մը ունէր, կանգնադեղ, նուրբ հասակ մը. սքանչելի աչքեր որոնք կ'երգէին միշտ կարծես, հրայրքով, հուրերով լիցուն աչքեր. սովիտակ, նրբահիւս սրաշտելի ձեւեր :

«Հաւատալս չէր դար երբ կը մտածէի որ այդ անուշ, յանկույիչ էակը ինծի կը պատկանի մասով մը. իր համակրութիւններուն, ցաւերուն, սէրերուն ընկերն էի. ժամերով կը խօսակցէինք իրարու հետ. մեր կեանքէն պատմութիւններ կ'ընէինք, առանց ձանձրանալու, և կը տեսնէինք որ իրիկուն եղած էր յանկարծ, ակնթարթի մը մէջ կարծես:

«Հոգիինս իրար կը ձուլուէր այդ պահերուն. ու ես մանաւանդ երջանիկ կը զգայի ինքզինքս, այդ խելայեղիչ եթերային էակին ծունդերուն առջեւ մնալով այդպէս, հատնելով, մարմերէն'ով, երազած սիրոյս բովանդակ խելայեղումներէն արքիւ:

«Բայց, բնութիւնը ուղած էր որ ան օտարուհի մը ըլլար: Տարբերութիւնը ասիկա՛ էր միայն, բան մը որ եթէ մեր երկուքին միար, մեր երկուքին ձգուէր, տարբերութիւն ալ պիտի չըսէինք ապահովարար...»

«Վերջը:

«Կ'ուզէ՞ք որ ըսեմ թէ, այդ աղջիկը, իր տանընը տարեքը չի կոխած, պզտիկ հիւանդութիւնէ մը մեռաւ, թերեւս «զգալ զիտնալուն համար» ո՛վ գիտէ:

«Երեւակայութիւնս, ո՛ւՖ, ա՛ն է որ կը չարչարէ կը գալարէ զիս, իր մոլորեցնողի յաւիտեանական դերին մէջ հպարտ, անզգայ:

«Յիշատակով չեմ կրնար ապրիլ. սիրտս իր վիշտերն ունի, զանոնք պատմել կ'ուզեմ, զանոնք բացատրել կ'ուզեմ:

«Ո՛ւր է ան, ո՛ւր է այն էակը, որ միւսին տեղը ընէ, ո՛ւր է արդեօք...»:

Եւ բանաստեղծ բարեկամս, որ կ'ըսէր այս ամէնը, խենթի մը պէս խելացնոր, ինքզինքէն բոլորովին ելած, արցունքոտ աչքերը ինէ բաժնելով, խոյս տուաւ քովէս, զիս սարսափելի վիճակի մը մէջ ձգած:

Ս Ա Ռ Ի Յ Ո Վ Հ Ս Ն Ն Ս Յ Ա Ն

ԻՆՉՊԵՍ ԿԸ ԳՐԵՍ

Դրախտեցի(*) պայտածախի մը աշկերտն էի: Այն ատեն ձիու, իշու, դոմշու և եզի պայտերու Տիգրիսներն իրարմէ դատելու համար կտոր թղթերու վրայ գրուած ու կախուած մաբֆաներ կային:

Ես գիւտ մը ըրի. այդ մաբֆաներուն տեղ գեղադրեցի այդ կենդանիներուն գլուխները: Տէրս հաւնեցաւ գիւտիս:

Բայց գրելու այս կերպս ինձ չուտ փորձանք եղաւ, վասն զի օր մը Դրախտէն նալչաներ եկան, մարդերու եհմեցիի և խաքրբի համար, այդ նալչաներու մարքան ալ գեղադրեցի մարդու գլխով, բայց փառաւոր ծեծ մը ու տեղով՝ վաճառեցայ. վասն զի այդ նկարած գլուխս նմանութիւն ունի եզեր տիրոջս առաջնակարգ յաճախորդ պայտարի—նալպանդ գլխին ու դէմքին, որ սաստիկ սրբողեր և առուատուէ դադրիլ սպառնացեր էր:

Ի՞նչ կ'ընէ դեռարոյս եւ թերուս տղեկ մը երբ տէր ու տիրական չունի, սողալով պիտի սողայ, և օր մը, երբ ա՛լ ճար չկայ, վարժապետ պիտի ըլլայ: Ես որ գրող կարդացող ըլլալէ կը խորշէի, սա առածի տպաւորութիւնէս սողորուած կամ նախապաշարուած թէ «Աշխարհս գրող—կարդացողէ կը կործանի», ես ալ կամայ ակամայ վարժապետ եղայ, այսինքն գրող—կարդացող ըլլալու ստիպուեցայ, քանի որ աշխարհ զիս կործանած էր, լքած էր:

Բայց վարժապետութիւնէ յետոյ.—Ո՛վ չիդտեր թէ կա՛մ տէրտէր ըլլալու է կա՛մ վարդապետ: Տէրտէր չէի կրնար ըլլալ յերուսաղէմ, սակաւագ եղայ, և Ստամպուլի մէջ վարդապետ, և զրկուեցայ Մուշ, Սուրբ Կաթապետի վանքը, հոն գրող—կարդացող հասցնելու համար, ուր պատկեր մը կար, արքայութեան և դժոխքի պատկեր: Արքայութեան մէջ բազմած էին «գումարք արարածոց և երամք սրբոց» որոնց մէջ կային կաթողիկոսներ, եպիսկոպոսներ, վարդապետներ, քա-

(*)Պաղչէճիկին դրախտ կ'ըսուէր:

Մասիսի յաջորդ թիւերով պիտի հրատարակենք՝ Ախսաւուր հոգիներ, ՏԻԿԻՆ ԶԱՊԷԼ, ԵՍՍՅԵԱՆԷ և ընդարձակ նորալէս մը, ՇԱՏՈՒՆ, ԳԻՆԵՆԻԿԷ:

հանձններ ու առկաւագներ՝ փառանդ զղեւ-
տաւորուած ու բազմած, բայց ասոնցմէ ոչ
ոք կար դժուրքին մէջ. սիրտիս skrs եղած
էր թէ ինչու ոչ մէկ վանական կամ կղեր
չգտնուի հոն, չգիտեմ թէ արդեօք Սուրբ
Կարապետի Կաղ-Կրողէն ներշնչուած էի, երբ
գիշեր մը գաղտ գեղանկարեցի հոն, դժուրքի
մէջ, կառք մը, ուր բազմեցուցի եպիսկոպոս
մը թագապսակ՝ զգեստաւորուած, վեղար ի
գլուխ վարդապետ մը և ուրարակիր սարկա-
ւադ մը իբր կառապան, մէկին ձեռքը սան-
ձեր և միւսինը մտրակ տալով նստեցուցի:
Ոչոր կառքին առջեւէն ալ լծեցի երկու կո-
տոշաւոր եւ երկար թաւամազ պոչաւոր սա-
նանաններ, և կառքին ետեւէն նոյնպէս եր-
կու սատանաններ լծելով իբր կառքին մղող
և հրող, հեռուն ալ նկարեցի տիրացուներ
մում ի ձեռին:

Ոսկոյ քաշուցայ յետոյ, ուր հանդարտ
սրտով քնացայ, բայց առաւօտուն դղրդեցաւ
վանքը և մաղապուր... փախայ էրզրում և
անտի Ստամբուլ: Այդ օրէն թէեւ վաղ ան-
ցայ գրիչս գործածելէ, այլ սակայն հնար չե-
ղաւ, վասն զի ուրիշ մէկ մոլութիւնս կը
մղէր զիս դրելու, մանաւանդ առաջներ գը-
րելու, որուն արդէն վարժուած էի:

Որովհետեւ զուարճատէր մէկն էի, և եր-
բեմն երգիծատէր, ուստի գրածս նորէն կը
գրէի, կ'աւրէի, կը նորէի, կը շտկէի, կը
ծռէի, մինչեւ որ գորիչս խայթելու, կճելու
կամ ծիծաղելու գիւտ մը ընէր, այլ այնու-
հետեւ ինքնին կ'ընէի. «Կեցցէ կեանք իմ ազ-
նաւոր» և քէֆ կ'ընէի, մինչեւ որ լուրիկ
ըլլայի:

Իմ գրելու կերպս արտաւոյց էր ընդհան-
րապէս եւ դժուարին, մանաւանդ թափառի-
կոսի մը գրելու կերպն աւելի ծիծաղելի է
քան ծաղրելի: Տեսեր էք ժամերու մէջ հայ-
րապետի մը պատկերը, որ թաղապսակ, ար-
տախուրակներով և եմիփորոններով պարուր-
ուած, վակասով և փորուրարով զգեստա-
ւորուած և ծռնկին վրայ ունենալով կոն-
քեռ(*) բազմած է յաթոռ: Գիտէ՞ք կոնքեռն

ինչ է. — առաքելական մախաղը, որոյ մէջէն
Առաքեալը աղքատներու ողորմութիւն կու-
տային: Կոնքեռն է քառակուսի և խաչաձեւ
և խաչանիշ և ծոպաւոր: Ես ալ ունէի կոն-
քեռ, որոյ մէջ կը նետէի ինչ որ լսէի և
գտնէի, կամ գրքերու կամ թերթերու մէ-
ջէն կ'օրինակէի. թղթի կտորներով լեփ-լե-
ցուն այս կոնքեռս կը հանէի, կը դնէի քո-
վիկս: Երբ գրելու սկսիմ կը սլարպեմ դայն,
կը դատեմ կը զտեմ, կը շարեմ կը շտկեմ,
և երբ լմնայ կարգուսարքը, ճարկիլիս կը
ծխեմ և գաւաթս կը պարպեմ, իւրաքանչիւր
գաւաթիս ի վերջ՝ գրածս կը սրբագրեմ, նո-
րէն կը սլարպեմ և այսպէս կը շարունակեմ
մինչեւ որ ճարկիլիս մարի. վայ ինձ, եթէ
գրութիւնս վերջացած չէ, արարողութիւնը
կը կրնուի, կ'երեքնուի և կը շարունակուի,
եթէ խման ընկերակից մը ունենալու բաղդին
եւս հանդիպէի այս պահուն:

Բայց կը խոստովանեմ թէ գերընտիր կը
գրէի աւելի ևս ան առեւն, եթէ գանուէի
երաժիշաներու խմբի մէջ. ի լուր երգերու,
մանաւանդ մանքներու մինչեւ այսօր կ'ո-
գեւորիմ, կը մոլեգնիմ, կը հիանամ, կը վե-
րանամ և կը պուրթկամ, նման հին մարգա-
րէներուն և քուրմ-դուշակներուն: Բայց կոն-
քեռս. — միշտ ձանձրոյթ եղած է Պատրիարք-
ներու, վասն զի շատ անգամ խելաթափ
մեկնելով՝ կը մոռնայի դայն և կը բերուէի
Պատրիարքարան և չեթ կը լսէի, մանաւանդ
Յարութիւն Պատրիարքէն, որ որքան զիս կը
սիրէր, այնքան կ'ատէր Կոնքեռս:

Ու եղաւ որ երբ կոնքեռս լեփ-լեցուն
ըլլար, կը կիտէի, երկու ուսերէս վար ու-
րիշներ կը կախէի և կ'ըսուէին Արտախուրակ:
Հիմա գրելու կերպս փոխուած է, գա-
ւաթէ և կոնքեռէ վաղ անցած եմ, միայն
սիրական նարկիլէս ունիմ, որ քանի միայ,
սիրտս ալ կը միայ, համոզուելով թէ ո՛չ,
աշխարհ չկործանուիր դրող — կարգացողէն,
այլ աւելի ևս դրող կարգացողը կը կործա-
նուի:

ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՊԱՐՏԻՋԱԳԻ

(*) Կոնքեռը կաթողիկոսները կը գործա-
ծեն, որոնց հրամանաւ Պատրիարքներն ալ:

ԿԵՍ-ԲԺՅԿԱԿԱՆ

ԱՊՐԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ



Բոլոր կենդանիները կ'ապրին, բայց մարդը՝ իրերէ բանական կենդանի մը՝ գիտնալու է ապրելու արուեստը։ Մարդը կրնայ՝ իր գերազանց կարողութիւններուն շնորհիւ՝ ապրիլ, ուշադիր ըլլալով առողջապահական պարզ սակայն նոյն ատեն փրկարար սկզբունքներու, ու ասանկով կարող կ'ըլլայ իր համրուած օրերն աւելի երջանիկ ու հեշտին կերպով անցունել այս անցաւոր և ցաւոտ աշխարհին վրայ։

Առողջութիւն՝ ամէն մարդու վնասուած բանն է, մասնաւանդ զայն կորսնցունելէ վերջ։ Քիչերու միտքէն կ'անցնի պատրաստուել անձրեւի ու փոթորկի դէմ, երբ երկինքը պայծառ է ու անամպ։ Այսպէս ալ առողջութեան համար։ Երբ տկարութիւն մը գայ վերանիս, ա'յն ատեն է որ իրար կ'անցնինք, ու անկէ ազատելու միջոցներուն կը դիմենք։ մինչդեռ պզտիկ նախըզուրուիւն մը, ղեռ լրապէս այդ վիճակին մէջ չլինած, բաւական ըլլար թերեւս ազատել զմեզ անկէ։ Ուստի յայտնի է թէ՛ ամէն ատեն ու ամէն տեղ առողջապահական մատչելի ու դիւրին միջոցները որդեգրելու է մարդ։ Ժողովուրդը վարժուելու է կարեւորութիւն ընծայել դիւրութեան ազդարարութիւններուն, սա՛ կամ նա՛ վարակիչ հիւանդութիւններուն դէմ յանձնարարուած կանխարգելիչ միջոցներուն ու անտուժիւններուն։

Ասով մէկտեղ անտեղի ու անպէտ հոգերով չըջապատելու չինք մեր կեանքը։ Ապրելու սէրը կրնայ ծնունդ տալ վտանգաւոր հողածութեան։ Կրնանք ա'յնքան կարեւորութիւն ընծայել կեանքի կամ ապրելու անհրջան մանրամասնութիւններուն, որ այս պարագան ինքնին վերջի վերջոյ առաջ ընդ պրդիւնք մը, բոլորովին հակառակ փափագուածին։

Ու հա՛մկնալի ըլլալու համար կրնանք իր-

րեւ օրինակ առնել թոքախտը, որ չա՛տ իրաւամբ կոչուած է մարդկային ցեղի պատուհասը։ Դրացինդ թոքախտաւոր մըն է գիտես ատիկա։ Դիտես նաև թէ թոքախտը կրնայ ուրիշներու փոխանցուիլ թոքախտաւորին խուխէն կամ արտաշնչութենէն։ Լսած ես թէ թոքախտաւորին ընկերութենէն զգուշանալու է, ինչպէս մարդ պիտի զգուշանար թունաւոր կամ վտանգաւոր բանէ մը։ Մինչև հոս, չա՛տ լաւ գիտցածդ՝ գիտութեան վաւերացումը ունի արդարեւ։

Երբ սակայն քու կեանքիդ վրայ չափազանց խնամք մը ցոյց տալով՝ կը սկսիս միտքդ կասկածներով բեռնաւորել ու կ'ըլլաս երեւակայական հիւանդ մը կամ թոքախտաւոր մը, ահա՛ հոս է որ քու թոքախտի մասին ունեցած կցկտուր ծանօթութիւնդ քեզի համար փորձանք մը կը դառնայ։ Աւելի ազէկ պիտի ըլլար քեզի համար տգիտութիւնդ, վասն զի այն ատեն հիւանդութեան վախը չպիտի հալածէր զքեզ և ամէն ջնջին ու աննշան զգացում նկատի չպիտի առնէիր, որով և հաւանաբար՝ չպիտի մաշեցնէիր մարմինդ ու միտքդ։

Բժշկական ուսանողներու մէկ շատ սովորական փորձառութիւնն է իրենց իսկ անձին վրայ գտնել ա'յն ամէն նշանները, որոնք յատուկ են սա՛ կամ նա՛ հիւանդութեան, զոր կ'ուսումնասիրեն հիւանդի մը վրայ կամ գրքերու մէջ։ Այնքան զօրաւոր բնութիւն մը կը հագնի հիւանդութեան կասկած ըսուածը, որ մարդիկ կը գգան ա'յն ամէն ցաւերը ու կը նշմարեն ա'յն բոլոր ախտանիշերը, որոնք ուսումնասիրուած հիւանդութեան մը յատկանիշերն են։ Ու կ'ըլլան իրական հիւանդներ։

Այս կասկածառութեան դէմ է խօսքս։ Բանաւորապէս զգուշանալ հիւանդութիւններէ ու հիւանդներէ՝ ազէկ բան մըն է անտարակոյս, բայց ծայրայեղ կասկածառութեամբ մարդ կրնայ գէշ ընել իր անձին։ Ու այս վերջին պարագային դէմ դնել կը սորվեցնէ ապրելու արուեստը։

Հիւանդ չըլլալու, ապրելու բոլոր մանրամասնութիւնները ընելու չե'նք մեր ամբողջ զբաղումը։ Մարդուն մէկը—կարծեմ իտալացի մը—իր տաղանաքարին վրայ գրել

տուներ է սա՛ տեսակ վերտառութիւն մը. — «Աղէկ էի, աւելի աղէկ ըլլալ փորձելով՝ հո՛ւ եմ»: Եւ տարակոյս չի կայ թէ այս տա- պանագիրը, իր կարճութեանը մէջ կը պա- րունակէ աւելի՛ ճշմարտութիւն քան այն շատ մը երկարածիք արձանագրութիւնները, որոնց մէջ ակնաբերութիւններ կը դնեն «անգութ մահ»ին, «անողոք հիւանդութեան» և ուրիշ չեմ գիտեր ինչերո՛ւ, որոնք սովորաբար կրնան ըլլալ բանաստեղծական, բայց քիչ անգամ իրական:

Աւելի չտակը սա՛ է որ շատեր գերեզ- ման կ'երթան որովհետեւ անպէտ հոգածու- թիւն մը, փնտսակար կասկածոտութիւն մը ցոյց տուած են ապրելու մասին:

Տեղն է հոս քանի մը խօսք ընել նաեւ գեղերու անխոհեմ ու ջերմեռանդ գործածու- թեան նկատմամբ: Նրբացած բնութեան և փափուկ կազմի նշան կը սեպուի՝ շարունակ գեղ գործածելը: Մասնաւոր պարագաներու տակ, բժիշկին յանձնարարութիւնովը առ- նուած գեղերու մասին չէ՛ հարկաւ գիտո- ղութիւն:

Հիպոկրատեան առած մը կ'ըսէ «Անստոյգ գեղ մը՝ ոչինչէն աղէկ է»: Եւ կարծես այս թիւր դադափարը ժողանդած ենք ընդհան- րապէս, նախ՝ մենք Հիպոկրատի աշակերտներս և յետոյ՝ մեր յաճախողները՝ ժողովուրդը: Սովորութիւն եղած է գեղ գործածել ան- պատճառ՝ ոչինչ, անկարեւոր բաներու համար իսկ, որոնք եթէ իրենք իրենց ձգուէին ա-ւելի շուտով անցնէին գուցէ: Վստահաբար կրնանք ըսել սակայն թէ ժողովուրդն է որ յաճախ դեղապաշտ կ'ընէ բժիշկը: Երբ ո՛ր և է հիւանդի մը համար բժիշկ կանչուի՝ կը սպասուի որ անպատճառ դեղագիր մը տայ բժիշկը, ու երբեմն ալ արուած գեղերուն զանազանութեան չափովը օգուտ քաղել կը հաւատայ հիւանդը:

Հապա՛ լրագիրներու մէջ ծանուցուած ա՛յն հազարումէկ տեսակ հրաշալի գեղերը: Ատոնք կրնան օգտակար ըլլալ դեղագործ- ներուն, հրատարակողներուն և ուրիշ որու որ կ'ուզէք, բայց դեռ ստուգուած չէ՛ թէ հի-ւանդ մը, իրական հիւանդ մը, երբեք օգ-

տուած ըլլայ այդ կարգի տարփողուած հա- մայնարոյժ գեղերէ:

Հանդիպելու եմ անանկ մարդերու, որոնց ամէն մէկ դրսեանին մէջ մէկ մէկ տեսակ գեղ կայ. փոքր անգութեան համար՝ դեղահատներ, լուծումի դէմ՝ ուրիշ դեղահատներ. անմար- սողութեան համար՝ խմելիք մը. ու չափա- ղանց ակորթակի համար՝ ուրիշ մը: Այսպէս նաեւ ուրիշ զանազան գեղեր, որոնք շարու- նակ հետեւնին կը պտտցնեն, պէտք եղած ատենը (°) կ'ընելու համար: Ու ետքն ալ կը դարմանան, կը դանդատն թէ ա՛յսքան դե- ղեր գործածելէ վերջ իսկ ինչո՛ւ չեն աղէկ- նար: Չարմանալի պիտի ըլլար արդարեւ եթէ աղէկնային: Խեղճ մարմին, որ ստիպուած է ատանկ անիմաստ գործածութեան մը տոկալ:

Ապրելու պարզ ու բնական օրէնքները բնութիւնն ինքը կը սորվեցնէ մեզի: Անոնց ականջ դնելը բաւական է սովորաբար՝ ա-ւողջութիւնը ապահովելու: Անիմաստ չէ՞ զորօրինակ երթալ հարցնել բժիշկի մը թէ ե՛րբ քնանալու է կամ ե՛րբ ուտելու է: Բը- նացի՛ր երբ որ քուռդ գայ, եւ կե՛ր երբ որ անօթի ես: Ասկէ աւելի պարզ բան մը կըր- նայ՝ ըլլալ աշխարհիս երեսը: Հաւատացէ՛ք, սակայն, որ կան փափկակաղմ (°) մարդիկ որ երես ունին այս կարգի հարցումներ իսկ ուղղելու բժիշկին, քանզի այնքան փափ- կանկատ են իրենց աւողջութեանը մասին, այնչա՛փ զգուշաւոր են ապրելու մասին. ու-րիշ խօսքով, չե՛ն գիտեր ապրելու արուեստը:

Այս կարգի անձերու համար լաւագոյն դարմանումն է զբաղումը: Ապրելու վրայ խորհելու քիչ մը քիչ ժամանակ արուելու է: Զբաղում չունեցող մարդիկ աւելի կը զբա- ղին իրենց փորովը. աւտուն կ'ելլեն «ի՛նչ պիտի ուտենք»ը կը խորհին, ու իրիկունը պառկած ատեննին՝ իրենց է՛ն վերջի մտա- ծումը կ'ըլլայ վաղուան ուտելիքնին: Եւ ո՛վ չի գիտեր թէ կերակուրներու անպէտ պէս- պիտութիւնը գլխաւոր պատճառներէն մէկն է մեր ատենի հիւանդութիւններէ մեծադոյն մասին: Չափաւորութիւնը օգտակար է միշտ. իսկ կերակուրներու մասին չափաւորութիւնը՝ խիստ բարերար աղբեցութիւն մը կը ձգէ

մարդու մարմինն լրաց: Եւ եթէ կը ներէք,
գէթ ա՛յս կէտը հաստատեմ դասական եղա-
նակով մը, Միլտոնի Դրախտ Կորուսեալի ԺԱ.
Դիրքէն հետեւեալ տողերը օրինակելով, և
նուիրելով մեր գրադարասէրներուն. —

«Վըկայեմ արդարութեանդ եւ հնազան-
դիմ, ասե Աղամ.

Իսկ չիցե՞մ այլ նամապարհի քան զդառ-
նաբեւս ի մահ գնալոյ
եւ ըզմեզ ի բնակա կիրքս խառնելոյ հող
եւ մոխիր»:

«է, ասե Միքայել, միւս եւս քեզայս
պահես օրէնս.

Մի՛նջ ԱՆՁԱՓ. զոր խրատե ժուժկալու-
քիւն ի կեր ու ի խում.

Մի՛ գրգանս որկորքսեան խընդրե՛լ այլ
զպէտքս պարեմի:

Մինչեւ ամբ լամբամբ եկեալ հասցեմ ի
փոյգ գլուխ.

Կեցցես զայս օրինակ, ապա յետոյ իբր
հասուն միւրգ

Ի գոգ մօրդ անկանիցիս, կամ քաղեսցես
մեղմիւ հեռեան.

Ոչ բըռնի շոպեալ ժամանդ ի մահ, եւ
այս է ծեր հաւակ».

ՏՈՔՅ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ԳԱՒԱՌԻ ԿԵԱՆՔԷ

Ա Յ Ր Ի Ն

(Վերջին մաս)

Առտուան ժամ մը մնացած՝ Թորոս ևսկած
էր օտան, ննջասնեակը պառկելու: Այն պա-
հուն աղան ալ դարձած էր նշանածին քո-
վէն: Զիրար տեսած չէին: Քունը ա՛լ նշա-
նակութիւն չունէր իրեն համար, սիրոյ առա-
ջին հրայրքը ըմբռնեալ էր ամբողջ գիշեր
մը առանց քամելու բաժակին մըրը որ ա՛լ
աւելի պիտի բազմապատկէր իր երջանկու-
թիւնը:

Առտուն դու աքեւը նոր ծաղած՝ պայծառ
երկինքով մը ջուխտակ եղները առջեւ ձը-
գած լուծքի: Կ'երթար Թորոս Գրիգորին հետ:

Ճամբան բաւական անուշ խօսուողութեւ մը
ունեցան: Գրիգոր գեղջկային անկեղծու-
թեամբ մը կը պատմէր անուշ ժամերը զոր
կ'անցունէր նշանածին հետ: Գեղերուն մէջ
սովորութիւն է: Նշանուող տղան շաքաթ մը
կտքը պէտք է երթայ նշանածը տեսնելու:
Առաջին երկու երեք շաքաթները մայրը և
տունին հարսները կը գտնուին փեսայուն
քով՝ որ մրգեղէններով բռնաւորութեւ կը
ներկայանայ անոնց, ամէն մէկուն սիրտը զատ
զատ առնելով: Ասիկա շատ շատ ամիս մը
կը տևէ: Անկէ վերջը, աղջկիւն ա՛լ կրնայ
առանձին մնալ խօսեցեալին հետ: Գրիգոր իր
գիշերային վայելքներովը արքայի՛ն գրեթէ ան-
կամայ կ'երթար այն օրը լուծքի: Քնացած
չէր:

Ու Թորոս՝ երազին մէջ յանկարծ հարբա-
տացած աղքատի մը պէս ուրախ ու զուարթ
կը թրլրար ու հրճուանքի անուշ երազնե-
րու մէջ կը թաղուէր: Հայրը պիտի ըլլամ
Գրիգորին ու էրիկը Արուսեակին, կ'ըսէր,
ի՛նչ մեծ բաղդ: Միտքէն անգամ չէր անցու-
ներ այն դժուարութիւնները որոնց պիտի
բաղխէր՝ եթէ գեղին տէրտէրին ու մեծերուն
ձեռքը իյնար: Չէր գիտեր թէ իր Արուսեակը
որքա՛ն սրտիւր էրած ու անիրաւ նախանձով
մը վառած էր ան ջերմութեանդ աղաները, թէ-
պէտ մանկամարդ այրին ասոնց ամէնուն պի-
տի յաղթէր բարեղէս դուգաղիպութեամբ
մը: Զաւկներու անարատ մայր մը ըլլալու
նախանձախնդրութիւնը այնքա՛ն նեղած ու
չայլըրկած էր խեղճ կինը: Եթէ պառաւներուն
ու հարսերուն հարցուէր թէ ինչպէ՞ս է Արուս-
եակ, պիտի ըսէին անմիջապէս թէ անձնամա-
տոյց մըն է ու թեկնածուները փոխանակ
խոստովանելու իրենց անյաղդութիւնը, չե-
ղածը եղած ցոյց տալու խայտառակութիւնը
պարծանք պիտի համարէին: Բարեբրու ին-
կածութիւնը այնքան խոր արմատացած է
նոյն իսկ գեղերուն մէջ որ սովորութիւն ու
աւանդութիւնները իրենց նուիրականութեան
սահմանին միջ մնասաբեր կը դառնան այն
կիներուն համար որոնք պատուաբեր կեանք
մը յօրինել կուզեն իրենք իրենց:

Զ.

Ծերունի քահանայ մը որ քանի մը անգամ

եկած հիւր եղած էր Գաբրիէլի օտան, իրիկուն մը յանկարծ իջաւ հոն ուչ ատեն: Կէս գիշերին փեսան ու տղան քովը, Արուսեակ պարզեց ամբողջ խնդիրը: Քահանան որ իր վերջին տարիներուն մէջ պատկառելի ծերութիւն մը կը վայելէր, գլխաց անոր խեղճ վիճակին վրայ ու այն պահուն պայուսակէն Մալթոց մը հանելով կատարեց պսակին խորհուրդը առանց քովերնին ունենալու գեղէն ոչ մէկը:

Տղան ու փեսան խնդրին էութեանը տեսնելանալով այն պահուն, իրենք ալ իրաւունք տուին իրենց մօրը իմաստուն ընթացքին, ընդունելով իրեւ հայր. Թորոսը զոր կը սիրէին արդէն: Բայց դուրսէն ոչ ոք գիտէր այս դադանի միութիւնը:

Անուշ հով մը կը փչէր: Վարդերը բացուած էին ու պարտէզը դալարաւտ դալատ մը դարձած էր հեշտաբոյր: Գեղին մէջ չգտնուած ամէն պտուղ հոն պատրաստ էր: Գաբրիէլին մեռնելէն ետքը փակուած էր պարտէզը դիւղացիներուն առջև: Թորոս քանի մը օրերէ ի վեր սկսած էր հոն պառկել: Ուռնիին շուքին տակ անկողին մը կար փռուած և պատին ետեւէն կը հոսէր գետակը, խորհրդաւորութիւն մը տալով այդ առանձնարանին: Իրիկուան զեփուրը կը փչէր դալարիներուն վրայէն՝ վէտ վէտ ալեակներ յօրինելով առուակին վրայ որ կը հոսէ հերիկ, ցուլացիկ նուրբ դիծի մը նման հրեղէն օձապտույտ մը կազմելով: Լիալուսին, բնաւ ամպ մը չէր խանգարեր երկնից անհուն կապոյտը որուն վրայ ցանուած էին խիտ առ խիտ լոյսեր: Թորոս ընկողմանած՝ քիթին տակէն կը մրմնջէր երգ մը որ գեղի երիտասարդներուն բերնէն կը լսուէր ձորակին մէջ և որուն արձագանքը կը սրտայուզէր ամէն աղջիկ տղամարդ: Ամայութիւն մը—համակ անդորր—տեղ տեղ գորտերու կրկուքը ու թռչուններու բոցներու ձվղուկը կը լսուէին ատեն ատեն: Ստուեր մը սահեցաւ տունին դուռնէն ու եկաւ պարտէզը աներեւոյթ եղաւ խիտ ծառաստանի մը թաւուտքին մէջ:

Արուսեակն էր, որ օրուան գործերը կարգադրելէն ու ցորեկն ալ պարտէզին այդ մա-

սը լաւ մը յարգարելէն ետքը ըսած էր Թորոսին որ հոն երթայ: Թորոս ալ կորսնցուցած էր միամտութիւնը ու Արուսեակէն ներշնչուած՝ տանուտէրի մը գիտակցութիւնով օժտուած էր: Երիտասարդ կինը պարզած էր անոր իր խղճալի վիճակը, ոտիները, անտէր տունին խախտ գիւրքը, զաւկներուն խնամքի պէտքը, տանտիրոջ մը անհրաժեշտ ներկայութիւնը ու լուսահոգիին եղբորորդին ըլլալով իրեն յարմարութիւնը: Ալ Թորոս հեղինակութիւն մը ունեցած էր ամէն բանի վրայ: Դեռ մինչեւ այն օրը երեւան ելած չէր Արուսեակի յարարերութիւնը Թորոսի հետ ու պսակին: Չարամիտներ ու Արուսեակին բաղձալուսներ կը խնդային առջի օրը Թորոսին վրայ ըսելով թէ «խանուան ալ ինչ օքղալու է»: Այս խօսքերուն հանդէպ Թորոս ցուրտ անտարբերութիւն մը և խելիւ միամտութիւն մը կը կեղծէր: Այս վիճակին մէջն էր որ անոնք մեղրալուսնի գիշեր մը պիտի անցունէին այն օրը: Մայրը Գրիգորը նշանածին զրկած էր ու զաւակներն ալ քնանալու:

Գեղացիները մեծ մասամբ անտարբեր կ'ըլլան մաքրութեան: Բացառութիւն մըն էր Արուսեակ որ այս պարագային մէջ ալ միւս կանանց նախանձը կը գրգռէր: Ամէն անգամ որ տեսնէին անոր այտերուն փայլիլը, կ'ըսէին «էրիկ տ'երթայ տէրտը էն է»: Թող թէ էրկան ատենն ալ միեւնոյնն էր: Դարձեալ այն օրն ալ լուացուած ու կանացի հրապոյրին վրայ բարդած էր մաքրութեան հրապոյրը: Թարմ մարմինը այնքան փայլուն ու ցոլացիկ էր որ իր սեռին ամէն հմայքները ունէր, հակառակ առօրեայ աշխատութեան:

Թորոսի երիտասարդութիւնը, որ դաշտի մաքուր օդին մէջ սնած ու անեղծ մնացած էր, այս ամիսնոր կենդանութիւն մը առած էր կարծես: Ամուսնութիւննին շատ յարմար եղած էր և իրենց հողային հարստութեան յաւաճացումին պիտի նպաստէր, քանի որ մարդու պէտքը զգալի էր: Այնուհետեւ ազալ մըն ալ կրնային վարձել ու լուծքը երեքի բարձրացնել:

—Հաւնեցա՛ր, Թորոս, տեղդ ինչ լաւ եղած է:

—Ախ, Արուսեակա, քու ըրածդ դէշ կ'ըլլայ, ըսաւ ու ձեռքէն բռնելով քովը նստեցոց։

—Ո՛հ, համբերութիւն, գիտես որ քուզիդ եմ առկէ վերջը, յոյս ունիմ որ Գաբրիէլիս պիտի փոխանորդես քու անկեղծ վարձունքովդ։

—Աղուոր Արուսեակա, դուն իմ հոգիս պիտի ըլլաս, քեզմով պիտի անցունեմ կիտանք մը որուն արժանի չէի չքաւորութեանս մէջ։

—Ո՛հ, Աստուած պահէր ու օրհնէր մեր ընտանիքը, որ սիրտս անգամ մըն ալ չարիւնէր, ըսաւ կլինը հառաչ մը արձակելով սրբալին խորէն։

Ու պահ մը մնացին հիացումի ու վերացումի քաղցրիկ անուրջներու մէջ։ Իւրաքանչիւրին սրտին մէջ կը հոսէր վճիտ աղբիւր մը անհուն խնդութեան որ յախտնականութիւն մը կ'արժէր։ Ո՛չ մէկ ամպ չէր սքողեր ցոլացիկ լոյսը լուսնին որ ականատեսը կ'ըլլար այս սիրային աղապատանքին Բունակեցիկ ձագուկներու ճըլլգուքը կ'աւետէր կեանքին վերընձիւղիլը ալեւոր ծառի մը մէջ որ շնորհիւ գարնան ոգեւորութիւնն առած էր, նոր կեանք ու նոր առեւգութիւն։ Լաճերը մուշիկ մուշիկ կը քննային։

Առջի իրիկուն տէրտէրը պսակած էր զիրենք ու այս իրիկուն ալ բնութիւնն էր որ անսպառ օրհնութիւններ կը հեղուր ամուսնորուն վրայ։ Սուրբ էր իրենց սէրը ու անկեղծ։

Շաբաթ օրը, պատարագէն ետքը մատաղ կար Թորոսին տունը։ Արուսեակ երկու ոչխար մորթել տուած էր ու գեղացին հրաւիրած։ Գեղին մեծերը, տէրտէրին հետ ուրբաթ իրիկուն հրաման մը ստացած էին Առաջնորդէն՝ ծերունի քահանային կատարած պսակին վաւերականութիւնը հաստատող։ Իոյր ասոնց համար հինգ ոսկին բաւական եղած էր զոր տուած էր Արուսեակ։ Քէհեա, տէրտէր, ամէնքն ալ խոր քունէ մը սթափածի նման ապուշ ապուշ իրարու երես կը նայէին, կրակ կայծկլապցնելով իրենց խոռոչացած ցանկամու աչքերէն։

Կիրակի, երբ տէրտէրը մուծնուլուսուն

երկու պառաններու հետ եկեղեցի կը դիմէր, տեսաւ աչքին տակէն Արուսեակը որ պարտեղէն ելլելով տուն կը դառնար հապճեպ։ Ու ըսաւ քովիններուն

—Տեսա՞ք, օրհնածներ, սա որդնոտին կերած երգեմ, քաթան փուռը տուեր է տէխապար չունինք... Էտէսլսի՛ղը։

ՇԱՀԱՐԻՆ

ՎԵՐՋ

ՀԱՄԱՐԱՐՁՄԱՆ տօնը աւանդական հանդիսաւորութեամբ կատարուեցաւ հինգշաբթի օրը, Ս. Փրկչի Հիւանդանոցին մէջ։ Հակառակ անձրեւոտ օդին, մայրաքաղաքիս ամէն կողմերէն ստուար բաղմութիւն մը փութացած էր Եկեղեցուկէ։ Առաւօտուն, Ս. Պատրիարք Հայրը պատարագեց մատրան մէջ, յետոյ նախագահեց սեղանին՝ շրջապատուած եպիսկոպոսներէ, Վարչութեան ու Հոգաբարձութեան անդամներէ եւ ուրիշ ծանօթ անձնաւորութիւններէ։

Թէ՛ եկեղեցիին մէջ, յաւարտ քարոզին եւ թէ՛ սեղանին վրայ, ջերմազին բարեմաղթութիւններ եղան Վեհ. Կայսեր արեւչատու. թեան համար, որ Իր շնորհները կը պարգեւէ այդ բարեգործական յարկին։

ԽԱՐԵՆԻ Պատր. նախորդ Փոխանորդ Տ. Եղնիկ Ծ. Վրդ. Գալփաքեան, որ Բաղէշի առաջնորդ ընտրուած է, շաբթուս սկիզբը մայրաքաղաքս հասաւ՝ ասկէ ուղեւորելու համար իր նոր պաշտօնատեղին։ Տ. Եղնիկ վարդապետ, իր երկու տարուան պաշտօնավարութեան միջոցին, օգտակար դործունէութիւն մը ցոյց տուաւ իր հովուական շրջանին մէջ, վայելելով թէ՛ տեղական պաշտօնական մարմիններուն համարումը եւ թէ՛ Ժողովրդեան համակրանքը։ Իր ժամանման յաջորդ օրը, ներկայացաւ Ս. Պատրիարք Հօր եւ իր պաշտօնավարութեան մասին բերանացի բացատրութիւններ հաղորդեց, իր երկամեայ զբաւոր տեղեկագիրը թղթատարով ղրկած ըլլալով արդէն Պատրիարքարան։ Բաղէշի առաջնորդը, իր պաշտօնին վերաբերեալ պաշտօնաթուղթերը ստանալով Պատրիարքարանէն, մօտ օրէն ճամբայ պիտի ելլէ եւ կը սիրենք հաւատալ որ այն տեղ ալ օգտակար ու դնահատելի հովուութիւն մը պիտի ունենայ։

ՈՒՐՈՒԱԳԻԾՆԵՐ

(ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ)

ԳՈՒՐԱԿԱՆ ՅՈՒՄՆԻՔ

Գուրպան Յուսէփ մեռած... դժուարս կուգայ հաւտալ, և իր Մահադդը որ կը ծանուցանէր, սովորական ձեւով, թէ «Յետ կարճատեւ հիւանդութեան կնքեց իր մահ» կանացուն Բերա, իր բնակարանին մէջ»։ ար- խուր կատակ մը, դառն հեղինակութիւն մըն էր կարծես մարդու մը համար որ ամբողջ կեանքը կատարելով ու հեղինակութիւնով անցուցած է, որ խնդացած ու խնդացուցած է շարունակ։ Եւ, հին կամ նոր գրադէտի մը կամ ար- ուեստագէտի մը ուրուագիծին տեղ, զոր կը պատրաստուէի գրել Մասիսին համար, այս նշանաւոր որովայնախօսին կը նուիրեմ «Վայր- կենական»։ Որովայնախօս, հոպիտ, զուար- ճաբան, ու մինչեւ իսկ իր պարապոյ ժամե- րուն մէջ... վիպասան, Գուրպան Յուսէփ արուեստագէտ մըն էր բառին ժողովրդական առումովը, — սա տարբերութեամբ որ փոխա- նակ բեմի վրայ ելլելու՝ ընտանեկան ու ըն- կերային գումարումներու մէջ կուտար իր ներկայացումները, միւս միակը ամբողջ դա-ւնշտախօսման մը դերը կատարելով անհատ- սարելի պէսպիսութեամբ ու զուարճալիօրէն։ Զինքը չի հասկցողները կը խնդային ու կ'անցնէին, գոհիկ ժամանց մը միայն փնտ- ուելով անոր դէմքի ձեւացումներուն ու ձայ- նի փոփոխականութիւններուն մէջ։ Բայց բարձրութեւ ինչ խորունկ ուսումնասիրութիւն, իրական կեանքի ինչ հարադատ պատկերա- ցում կար այդ հոպիտութիւններուն մէջ։ Ընկերութեան դանադան խաւերը, կինը իր ամէն հասակներով, էրիկմարդը՝ իր այլազան տիպարներուն մէջ, tableau vivant մը պէս ցուցադրելու գաղտնիքը ունէր, սալօնի մը անկիւնը կեցած, բազմութեան քրքրալիւր ծի- ծաղներուն մէջ տեղ։ Յետոյ, իր անէկզոտ- ները կային, իր թղթի խաղերը, ու ամէնէն վերջը՝ որովայնախօսութիւնը որ ապշութիւն կ'աղդէր։

Փողոցին մէջ պարզ հանդիպում մը Գուր- պան Յուսէփի հետ, ու բարեւի մը փոխա- նակութիւնը, ժպիտ մը կը բերէին դէմքի վրայ, չէր գիտնար ինչո՞ւ և ինչպէ՞ս Շոգե- նաւին մէջ, հանրակառքին մէջ, քանի մը հոգիներու հետ նստած խօսակցած պահուն՝ կերպարանափոխ կ'ըլլար յանկարծ։ առաջին անգամ ներկայ դառնող մը այս տեսարանին՝ հմայուած ըլլալ կը կարծէր, և հաւտալը չպիտի դարձէր կ'ըլլէր այլակերպութիւնը ձայնը, շարժումները չհամապատասխանէին անոր առած երեւոյթին։ Վայրկեան մը ետքը, Գուրպան Յուսէփ իր բնական ձեւը վերստա- ցած, կը շարունակէր ընդհատուած խօսակցու- թիւնը։ Հո՞ն էր իր եղական ճարտարութիւնը որ դերասաններու պէս արդուղարդի խցիկ մանելու, ներկութեւ, կեղծամ գնելու և այլնի պէտք չունէր։ իր ձեւափոխումները վայրկե- նական էին՝ ինչպէս իր ներկայացումները։ Ու- ղեւորական մտացածին պատմութիւններ ու- նէր որոնք հեռաւոր ու անձանթ աշխարհնե- րու մէջ կը փոխադրէին ունկնդիրները, ա- մէնէն վարպետ գրիչէն ալ աւելի կենդանի նկարադրութիւններ, որոնք մէյ մէկ étude de moeurs էին ու հնչալի ժամանցներ։

Իր մտերմական տեսակցութիւններուն մէջ, սակայն, երբ մարդ զբօսցնելու պէտք չէր ունենար, — արուեստներուն ամէնէն տաժանե- լին, — կը դիտէր որ լուրջ մէկն է, որքան որ բնաւորութիւնը ու բնաւորութեան տեղ անցած սովորութիւնը կը ներէին իրեն լուրջ ըլլալ։ Հասուն խորհրդածութիւններ կ'ընէր, տեսակ մը փիլիսոփայութիւն, չըսելու համար սիւսպտութիւն, արտայայտելով կեանքի ըմ- բռնումի մասին։ և աւելի առաջ երթալով իր մտերմութեան մէջ, — իր թաքուն դժա- ցումներուն քեղի հաղորդակից ընելու, սիր- տը քեղի բանալ տալու աստիճան, — դառնու- թեամբ պիտի նշմարէր որ ամբողջ կեանքը խնդալով ու խնդացնելով անցունող ու միշտ երջանիկ երեւցող այդ մարդը... աշ- խարհի ամէնէն տխուր ոգ- դժբաղդ մարդերէն մէկն էր։

Գ. Ս. ՄԷԻՐ

Արսօմսկի Կ. Ս. Ի. Թ. Ի. Զ. Ն. Ն.

Տպագրութիւն ԱՐՄԵՆԻԱՅԻ Օրագրի

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1899ի վերջը հատուցեալ շնորհք	240,000,000	Փր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1889ի վերջը հատուցեալ շնորհք	99,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հոկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղչեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրութեան Ձե՛րՄ Է՛ն այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒՒ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեալ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համալ, Բասաժ Գաթրեմ Օղլու

Մասնաձիւղ՝ Ղալաթիա, Ինայէթ Խան, գործակալ Միհրան Էֆ. Դաւիթեան:

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱՏԷՔ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարոկական Վարժարանին

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, թիւ 61

Զբոսնեան աբաղքման

Պալպալեան ամէն օր ակոյայի ամէն տեսակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Ներքէշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան ո եւ է ժամուան կարելի է դիմել: Պալպալեան կ'ենթարկուի իր լեցուցած ու շինած ակոյաները: Յորեկները ակոյայ քաշել տալու համար որոյ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կախեալ է:

Աղփասներուն ձրի

“AU TALON D'OR”

Օ ԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՁԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՌԼՕ ԱԶՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՍԱՐ

Նաեւ կաղերու համար պատրաստուած

Կալաքա, Վոյվոսա փողոց, թիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան համաձայն կօշիկներու յանձնարարութեան համար, — մանաւանդ չափու վրայ չինուելիք, — կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառատունը:



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ



Ընկերության դրամագլուխը, ամբողջապես վճարուած	10,667,667	Փրանք
1901 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիներ ու տոկոս	54,000,000	»
Երաշխաւորութեան գումար	122,000,000	»
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249,400,000	»

Կեդրոնացեղի, Ղալաթիոյ Քարափին վրայ, Մաքսան հին տեղը

Ընդհ. ՔՃԵԻՀ
Ա. ՀԻՒՐՄԻՒԶ

Ընդհ. Դորձակալ
ԹԵՈՏՈՐ ՌԵԲԵԷՆ

ՖԷՆԻՔՍ ԷՍԲԱՆԵՕԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Հրդեհի եւ Կեանքի Ի ԲԱՐԻՉ

Դրամագլուխ՝ 63,228,000 Փրանք: Դրամա-
տուն Ի Կ. Պոլիս՝ Բրէտի Լիօնէ

Դեր-Դորձակալ Կ. Պոլսոյ ճիւղին

ՔԱՌԼՕ ԱՀՆԱՄԵԱՆ

Կալաթա, Վոյվոսա փողոց Թիւ 103

ԱՆԳԻՐԸ

Ու եղաւ որ հարց ըստ թէ ինչո՞ւ
Զատկին հաւկիթը կը ներկուի.— Կ'ըսէք,
Անգիր Դպրութեան նոր տպուած Բ. հա-
տորի ութերորդ տետրին մէջ գրուած է:

Դիմել առ Վահան վրդ. Պարտիզակ-
ցի, Պաղտատեան գրատուն, Պոլիս,
Սուլթան Համամ, Թիւ 14:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՏԻԿԻՆ ՌՕԺԷ

Թարգմանեց ԶԱՐԻՄՅՈՐ

Դաղաւիարի անուշ վիպակ մը՝ փափ-
կախօս եւ մեր հասարակութեան համար
նոր հեղինակի մը կողմէ գրուած՝ ուր
պատմուած ընտանեկան կեանքէ պարզ
տուամին մէջ սրտայոյզ էջերը չէ որ կը
պակսին, եւ որուն ընթերցումը աղնիւ
ղգացումներ պիտի արթնցնէ սրտերու
մէջ: Կեդրոնատեղին է Սալիկ էֆ. Էն-
ֆիէճեանի՝ Նոր Դրատունը՝ Պապը Ալի
ճատտէսի Թիւ 6: Կը գտնուի բոլոր գը-
րավաճառներու եւայլն քով: Դին 100
փարա: Բոսթի ծախքով 3 շրշ:

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ . ԹԱԳ . ԱՌԱՆՁՆԱԾՆՈՐՀԵՍԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐ . ԸՆԿ .

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒՍԱԿԱՆ ՆՍԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն . Ա . Բ . ԳՈՒՔՍ ՂՈՒՐ ՏԷ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹԵՐԵՅԵԱ

Ապահովագր . ԸՆԿ . ընդդէմ հրդեհի (Ի ԳԱՐԹԱՅԷՆ)

ԱՆԼԵԱՆՑԱ

Մովային ապահովագր . ԸՆԿ . (Ի ՆԵՆՈՎԱ)

Սոյն ընկերութեանց Դրամատունն է Ի Կ . Պոլիս , Գոքսի Լիօնե
Ընդն . եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ . ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ , Պոլիս , Հանօբուլօ խան , Թ . 52—53—54—55—56

ՏՈՔԹՈՐ Լ . ՄԱԼԻԱՍԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ—ՄԱՆԿԱԲԱՐՁ

Մասնագէտ կանանց հիւանդութեանց
(Վկայեալ Բարիզէն)

Կը դարմանէ ներքին ու արտաքին հիւանդութիւններ , կը կատարէ վերաբուժական գործողութիւններ՝ վերջին կատարելա-գործեալ դրութիւններով :

Բարիզի , Նանսիի հիւանդանոցներուն մէջ երկար տարիներ օգնական-բժիշկի (հիւր-բերն) պաշտօնը վարած ըլլալով , գործնական ու փորձառական երկար ուսումնասիրութիւններ ընելէ վերջ , այս անգամ Կ . Պոլիս եկած եւ հաստատուած է Բերա , Թարլա Պաշը , Թիւ 136 :

Ծանօթ .—Հիւանդներ կ'ընդունին ամէն օր կէս օրէն վերջը իր բնակարանին մէջ , ժամը 1—4 (Ը . Ն .) : Ներքաշարթի օրերը միեւնոյն ժամուն ձրիաբար կը դարմանէ կարօտ հիւանդները :

—14—20

ԴԱՇՆԱԿԻ ԴԱՍ

Դաշնակահար օրիորդ մը , որ խիստ լաւ մէթոտ մը ունի նորավարժները մարդեղու դաշնակահարութեան , կը փափագի այցելութեամբ դաս տալ տուններու մէջ : Դիմել՝ Մասիսի խմբագրութեան :

2—4

HOTEL «FERAH»

ՕԹԷԼ «ՖԵՐԱՀ»

Բրինքիքօ , Նիզամի պողոտային վրայ , ծովահայեաց , ընդարձակ սպարոէզներու մէջ : Վարձակալը , Առաքել Տեքեկեան որ այնքան խնամօք կը վարէ Պոլիս Սուլթան Համամի հանրաժանօթ նախկին Դասպար ճաշարանը , յանձն առած է նիւթական ամէն զոհողութիւններ ընել՝ իր բաղմամբիւ յաճախորդներուն հանգստութեանը համար :

Դինները չափաւոր . լաւ եւ մաքուր մոտեղ . պանդոկը բաց է Ներսիսական մայիս մէկէն սկսեալ :

ՏՈՔԹ . Ն . ՄԱՍԻՍ (Բերա , Թագսիմ փողոց , ք . 15) Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ , կը դարմանէ մասնաւորաբար , նոր մեթոտներով եւ խնամով , ստամոքսի , աղեաց , միզային ճամբաներու հիւանդութիւնները , ջղային տկարութիւնները , գաղղիական ախտերը (սիֆիլիս եւ այլն) եւ մորթի հիւանդութիւնները : Հիւանդ կ'ընդունին ամէն օր կէս օրէ վերջը :